ԵՐԵՎԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Ն. Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Երևան քաղաքի անվան ծագման և նրա հիմնադրման ժամանակի հարցը, սկսած դեռևս անցյալ դարի 30-ական թվականներից, եղել է հայ բանասիրության մշտական հետաքրքրության առարկան, ըստ որում թեև Երևանը հայ պատմիչների մոտ հիշատակվում է սկսած VII դարի սկզբներից, այնուամենայնիվ, ափսոսանք հայտնելով, որ ավելի վաղ շրջանի պատմիչները այդ մասին ոչինչ չեն հաղորդում, բոլոր բանասերները միաբերան հակում են ունեցել կարծելու, թե այն շատ ավելի հին է, քան հայ պատմագրության՝ նրա մասին ընձեռած փաստերը։

Ի տարբերություն վաղ շրջանի որոշ բանասերների, որոնք Երևանի անվան ծագման ու նրա ժամանակի հարցը կամ անհիմն կերպով կապել են ժողովրդական այն ավանդության հետ, ըստ որի համաշխարհային ջրհեղեղից հետո իբր առաջին անգամ երևացել է քաղաքի տեղը և այդտեղից էլ առաջացել Երևան անունը[1], կամ, լավագույն դեպքում, համարել են հին Երվանդաշատ (Հ. Նալյան), Երվանդավան (Չամչյան) կամ Երվանդ Բ-ի այլ դաստակերտներից մեկը՝,— ուշ շրջանի բանասերների մոտ այդ հարցի մեկնաբանությունը ստացել է, համեմատաբար, դիտական բնույթ։ Այդ տեսակետից, թեև այժմ ընդհանուր առմամբ անընդունելի, այնուամենայնիվ, որոշ իմաստով, արժանի է ուշադրության Մ. Վ. Նիկոլսկու կարծիքը, ըստ որի Երևանի անունը, ամենայն հավանականությամբ, սերում է ուրարտական Eriaini երկրանունից[3], որը հիշատակվում է Ռուսա I թագավորի Տոպինար (Հայկական ՍՍՌ Մարտունու շրջան) գյուղից ոչ հեռու, Սևանա լճի հարավային ափին թողած մի ժայռագիրարձանագրության 11-րդ տողում։ Իր այս տեսակետը ավելի համոզիչ դարձնելու նպատակով, Մ. Վ. Նիկոլսկին միանգամայն հավանական է համարում, որ այդ երկրի կենտրոնը այն ժամանակ ընկած լիներ հենց այնտեղ, ուր այժմ Երևանն է, քանի որ ստրատեգիական տեսակետից այդ քաղաքն ունի բավական հաջող դիրք՝ գտնվելով Արաքսի հովտի ծայրագույն հյուսիս-արևելյան անկյունում, մի տեղում, ուր լեռները արևելքից ու հյուսիսից ամուր շղթայում են դաշտավայրը և Զանգու (Հրազդան) գետը լեռներից դուրս է գալիս հովիտը։ Մյուս կողմից, նրա կարծիքով հիմք կա պնդելու, թե ուրարտական ժամանակաշրջանի

---

[1] Տե՛ս Ղուկաս Ինճիճյան, Հնախոսութիւն աշխարհագրական Հայաստանեայց, Վենետիկ, 1835, հատոր Ա, էջ 273—274, հատոր Դ, էջ 13։

Այս մասին մանրամասն տե՛ս Լեոնդ Ալիշան, Այրարատ բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ, 1860, էջ 299 և հտ., Հ. Ս. Էփրիկյան, Բնաշխարհիկ պատկերազարդ բառարան, հատոր I, Վենետիկ, 1902, էջ 694 և հտ.։

[3] Տե՛ս М. В. Никольский, Клинообразные надписи Закавказья. МАК—V, Москва, 1896, էջ 97։

Երևանը ընկած է եղել, ըստ երևույթին, ոչ թե այժմյան Երևանի տեղում, այլ նրանից որոշ հեռավորության վրա, այսինքն՝ ուրարտական VIII դարի քաղաքամրոց Արին-բերդի տեղում[1]։

Այս տեսակետը, ինչպես կտեսնենք, միանգամայն հետաքրքրական է այն առումով, որ չնայած ուրարտական Eriaini-ի և ուշ շրջանի Երևանի անհիմն նույնացմանը[2], այնուամենայնիվ դրա հեղինակը դեռևս անցյալ դարի վերջերին բավական սրամիտ ձևով կռահել է, թե նախ՝ Երևանը նույնքան հին է, որքան պատմական Ուրարտուն և ապա՝ հնագույն Երևանը պետք է որոնել ուրարտական երբեմնի քաղաք-ամրոց Արին-բերդի տեղում։

Երևանի անվան ծագման ու նրա հիմնադրման ժամանակի հարցը, սակայն, գիտական լուրջ պրպտումների լայն հնարավորություններ է ընձեռում սոսկ 1950 թ., երբ Արին-բերդում հայտնաբերվում է ուրարտական VIII դարի թագավոր Արգիշտի I-ի 13 տողանոց մի սեպագիր արձանագրություն, որի 1—9-րդ տողերում հիշատակվում է, թե հիշյալ թագավորը կառուցել է այդ հոյակապ քաղաք-ամրոցը[3], Էրբունի անվամբ, ի հզորություն Բիայնիլի (= Ուրարտու) երկրի և ի սարսափ թշնամի երկրների, ըստ որում ակնարկվում է նաև այն մասին, թե հողը եղել է ամայի[4] և թագավորը հզոր ու առնական գործեր է ձեռնարկել այստեղ[5]։

Արգիշտի I-ի վերոհիշյալ արձանագրությունը հետազոտողներին հնարավորություն է ընձեռում կռահելու, թե հնարավոր չէ՞ արդյոք Երևան անունը սերել ուրարտական Erbuni-ից։ Այս հարցում դայթակղության առարկա է հանդիսա-

---

[1] Տե՛ս М. В. Никольский, Клинообразные надписи Закавказья, էջ 98։

[2] Այս տեսակետը իր ժամանակին, որոշ վերապահումներով, ընդունել են նաև Հ. Ասանդալջյանը, Ե. Շահագիզը և Գր. Ղափանցյանը։ Տե՛ս J. Sandalgian, Les inscriptions cunéiformes Urartiques, Venise, 1900, էջ 356։ Երվանդ Շահազիզ, Հին Երևանը, Երևան, 1931, էջ 7։ Гр. Капанцян, Историко-лингвистическое значение топонимики древней Армении, Երևան, 1940, էջ 8։

[3] Էր(ե)բունի ամրոցը «հոյակապ» (baduse) է անվանվում նաև Արգիշտի I-ի նույն Արին-բերդում 1957 թ. հայտնաբերված արձանագրության 4-րդ տողում։ Տե՛ս Հայկական ՍՍՌ ԳԱ «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 2, էջ 206, նկ. 3։

[4] Հողը ամայի լինելու և այնտեղ նախկինում ոչինչ կառուցված չլինելու մասին ակնարկվում են նաև Արգիշտի I-ի, Էրեբունիում 1956 թ. հայտնաբերված, երկու իդեոգրամատիկ արձանագրությունների 4-ա-րդ տողերում։ Տե՛ս Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1957, № 9, էջ 95, նկ. 1 և էջ 96, նկ. 2։

[5] Տե՛ս Гр. Капанцян, Новая клинопись, „Коммунист" թերթ, Երևան, 1950, 4 հոկտեմբերի, № 235 (4944), էջ 2. Մ. Իսրայելյան, Ուրարտական նոր արձանագրությունների հայտնաբերում, «Սովետական Հայաստան» թերթ, 1950, 3 հոկտեմբերի, № 234 (9000), էջ 4. К. Оганесян, Арин-берд (Ганли-тапа)— урартская крепость города Ирпуни, Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.) 1951, № 8, էջ 75—88. Մ. Իսրայելյան, Ուրարտական երկու նոր արձանագրություն, նույն տեղում, էջ 89—99։ Այս վերջին հրատարակության մեջ, արձանագրության գիտական տառադարձման բաժնում, դժբախտաբար, տեղ են գտել մի շարք անճշտություններ (հմմտ. արձանագրության լուսանկարը՝ Կ. Հովհաննիսյանի վերոհիշյալ հոդվածում, էջ 78, նկ. 2 և Գ. Ա. Մելիքիշվիլու ընթերցումը՝ Урартские клинообразные надписи (այսուհետև՝ УКН), 138, „Вестник древней истории" (այսուհետև՝ ВДИ), 1953, № 3, էջ 269)։ Ի դեպ նշենք, որ Մ. Իսրայելյանը (թերթում հրատարակված հոդվածում) և Կ. Հովհաննիսյանը հավասարապես ընդունելի են համարում այդ քաղաքանվան թե՛ Իրբունի և թե՛ Սարունի ընթերցումները։

նում թե՛ այդ անունների նմանությունը և թե՛ նրանց միևնույն վայրում տեղադրվելու փաստը։

Երևանը ուրարտական Erbuni-ից սերելու տեսանկյունից՝ միանգամայն կարևոր է ուրարտա-հայկական հնչյունական այն համապատասխանությունը, ըստ որի ուրարտերենի b-ն հայերենում օրինաչափորեն տալիս է ւ կամ վ (հմմտ. ebani և աւան, hubi և հովիտ, Bia(i)na և Վան, Abuni և Հաւունի — հաւունի(ք) և այլն)։ Ուստի այստեղից հետևում է, որ ուրարտական Erbuni-ին համապատասխանում է հայկական Երվունին կամ Երվունին։

Շնորհիվ Կարմիր-բլուրի հնագիտական նյութերի, ուրարտագիտությանը, սկսած 1950 թ., հայտնի դարձան Erbuni քաղաքանվան հիշատակության մի շարք նոր փաստեր, որոնք ի հայտ բերվեցին պեղված բրոնզե վահանների վրա և ակնարկում էին, թե այդ վահանները ուրարտական թագավոր Արգիշտի I-ը՝ Erbuni-ի կառուցողը, նվիրաբերել է հիշյալ քաղաքին[3]։

Erbuni — Երևան անալոգիան ամրապնդվեց հատկապես 1952—1953 թթ., երբ Կարմիր-բլուրի (Թեյշեբաինիի) պեղումներից հայտնաբերվեցին Արգիշտի I-ի բրոնզե երկու նոր վահաններ, որոնց վրա ուրարտական հիշյալ քաղաքամրոցի անունը հիշատակվում էր Erebuni[4] (= էրեվունի||Երեվունի) ձևով և որոնք իրենց գրությամբ շատ ավելի մոտենում էին Երևան քաղաքանվան գրությանը[5]։ Նշենք, որ այստեղ ևս որոշ կասկածանքներ է հարուցում այդ քաղաքանվան ուրարտական Erebuni (— Erevuni) և հայկական Երևան գրության -uni և -ան վերջավորությունների տարբերությունը։ Մեզ թվում է, թե ուրարտա-հայկական նմանօրինակ հնչյունական անցումը, ըստ երևույթին, հնարավոր է բացատրել նույն կարգի վերջավորություններ ունեցող մի շարք այնպիսի հնադույն հայկական տեղանունների նմանողությամբ, ինչպիսիք են Բագաւան, Նախճաւան (Նախջաւան)[7] և այլն[8]։

---

[1] Տե՛ս Մ. Իսրայելյան, նշվ. հոդվածը, էջ 97, ծանոթ. 2. Ա. Միրզոյան, Երևանի անվան ծագման շուրջը, Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1951, № 11, էջ 97—99։

[2] Տե՛ս Н. В. Арутюнян. Заметки по урартской эпиграфике. Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. դիա.), 1957, № 12, էջ 73 և ծանոթ. 2, 3։

[3] Տե՛ս Б. Б. Пиотровский, Кармир-блур, II, Երևան, 1952, էջ 52 (=УКН, 138) էջ 51(=УКН, 145, 146, 147), Кармир-блур, III, Երևան, 1955, էջ 27=(УКН, 147a)։

[4] Տե՛ս Кармир-блур, III, էջ 27 (վահան № 10=УКН, 147b), УКН, 147c (ВДИ, 1954, № 1, էջ 257)։

Erebuni=Երևան կարծիքը, հատկապես վերջին տարիներս, գիտության մեջ սկսում է ավելի ու ավելի մասսայական բնույթ կրել։ Տե՛ս Б. Б. Пиотровский, Кармир-блур, III, Ереван, 1955, էջ 27. И. М. Дьяконов, ВДИ, 1956, № 2. էջ 62, „Всемирная история архитектуры", I, Москва, 1958, էջ 33։

[6] Տես Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 216. Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց և թուղթ առ Վահան Մամիկոնեան, Տփղիս, 1904, էջ 139, 141. Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883, էջ 100, 161, 212։

[7] Տես Մ. Խորենացի, նշվ. աշխ., էջ 83, 112, 180, 196. Ղ. Փարպեցի, նշվ. աշխ., էջ 121. Փ. Բուզանդ, նշվ. աշխ., էջ 147։

[8] Մյուս կողմից, նկատի ունենալով, ինչպես ներքևում կտեսնենք, որ Երևանը ուրարտական շրջանի անկումից հետո՝ ընդհուպ մինչև մեր թվականության VII դարը մնացել է որպես Հայաստանի շարքային ավաններից մեկը, կարելի է ենթադրել, որ հայ ժողովուրդը, հնարավոր է, դեռևս նախադրային շրջանից սկսած, ուրարտական էրերունի-էրեվունի անվան- վուն(ի) վերջավորության մեջ հակում է ունեցել տեսնելու «աւան» բառը, հետևաբար այդ կարծեցյալ էրե-աւանը հենց ժողովրդական խոսվածքում կարող էր դառնալ «Երևան» և այդ ձևով էլ փոխանցվել VII դարի հայկական գրավոր աղբյուրներին։ Հմմտ. Ի. Մ. Դյակոնովի կարծիքը. ВДИ, 1956, № 2, էջ 62։

Ի դեպ նշենք, որ Erebuni քաղաք-ամրոցի գոյության մասին ուրարտագիտությունը՝ Արին-բերդում 1950 թ. հայտնաբերված Արգիշտի I-ի վերոհիշյալ արձանագրությամբ չէ, որ առաջին անգամ իրազեկ է դառնում։ Այն գիտությանը հայտնի է եղել շատ ավելի վաղ և իր արտահայտությունը գտել է ուրարտական նույն թագավորի Վանի սուրբ-Սահակ եկեղեցում հայտնաբերված մի արձանագրության մեջ, որը հրատարակվել է Լեհման-Հաուպտի կողմից դեռևս անցյալ դարի վերջին և այնուհետև տեղ գտել նաև նրա կազմած ուրարտական արձանագրությունների նշանավոր ժողովածուի մեջ։ Այդ արձանագրությունը, ինչպես հաստատել են Վ. Բելքը և պրոֆ. Գ. Ա. Մելիքիշվիլին, հանդիսանում է Արգիշտի I-ի հուշակավոր Խորխորյան տարեգրության կրկնագրերից (դուբլիկատներից) մեկը և համապատասխանում է նրա 2-րդ սյունակի 25—41 տողերին[2]։ Ուստի հիշյալ փաստը հետազոտողին բնականաբար հանգեցնում է այն մտքին, թե արդյո՞ք հնարավոր չէ վերը բերված տվյալների համադրության հիման վրա որոշել Erebuni-Երևանի հիմնադրման ժամանակը, այսինքն՝ Արգիշտի I-ի թագավորության ո՞ր տարում է այն կառուցվել։

Վերոհիշյալ հարցի լուծման ճանապարհին որոշ խոչընդոտներ է հարուցում այն հանգամանքը, որ Խորխորյան տարեգրության սկիզբը տուժած է և չի հասել մեզ իր նախնական վիճակում, ուստի առաջին հայացքից թվում է, թե դժվար է որոշել ոչ միայն Erebuni-ի հիմնադրման ճշգրիտ ժամանակը, այլև Խորխորյան տարեգրության մեջ տեղ գտած իրադարձությունների, հետևաբար և Արգիշտի I-ի թագավորության ժամանակը ընդհանրապես։ Սակայն պրոֆ. Գ. Ա. Մելիքիշվիլին բավականաչափ հիմնավոր ձևով ցույց է տվել, որ Խորխորյան տարեգրության սկզբի մասի կրկնագիրը հանդիսանում է Լեհման-Հաուպտի վերոհիշյալ աշխատության մեջ (ClCh) հրատարակված 112A$_3$ (աղյուսակ XXIX) արձանագրությունը[3]։ Եվ իսկապես, Արգիշտի I-ի 128A$_3$[4] և Սարդուրի II-ի 156 AII + AI (որ նույն ձևով նա համարում է Սարդուրյան տարեգրության սկիզբը)[5] արձանագրությունների տեքստերի մանրազնին համեմատությունը մեզ նույնպես բերում է այն հաստատ համոզմունքին, որ, իրավ, երկու դեպքում էլ մենք գործ ունենք ուրարտական այդ երկու թագավորների տարեգրությունների սկիզբն արտահայտող տեքստերի հետ։ Երկու դեպքում էլ այդ արձանագրությունները հիշատակում են, որ ի պատիվ ուրարտական գերագույն աստված Խալդիի, թագավորները բարձրացրել են այդ արձանագրված բարակոթողները (pulusi), ըստ որում առկա է նաև արքայական հայտնի տիտղոսաշարը («թագավոր հզոր, թագավոր մեծ, թագավոր Բիայնիլի (= Ուրարտու) երկրի, թագավոր թագավորաց, թագավոր տիեզերքի, տերը Տուշպա քաղաքի») և այսպես կոչված «անեծքի ֆորմուլան»։ Այնուհետև պատմվում է, որ Խալդի

---

[1] Տե՛ս C. F. Lehmann (-Haupt), Bericht über die Ergebnisse der von W. Belck und C. F. Lehmann 1898/1899 ausgeführten Forschungsreise nach Armenien. Sitzb. Berl. Ak. 1900; Corpus Inscriptionum Chaldicarum, I, Berlin und Leipzig, 1928, աղյուսակ XXVII, լուսանկար 112A$_2$, տող 15։

[2] Տե՛ս Waldemar Belck, Mittheilungen über armenische Streitgrafen. VBGAEU, Berlin, 1901, էջ 298 և հտ. Г. А. Меликишвили, УКН, ВДИ, 1953, № 3, էջ 232, 257։

[3] Տես ВДИ, 1953, № 3, էջ 231, 253, 260—261։

[4] Այստեղ և ներքևում ամենուրեք բերում ենք Գ. Ա. Մելիքիշվիլու հրատարակած ուրարտական արձանագրությունների ժողովածուի համարակալման համաձայն։

[5] Տե՛ս ВДИ, 1953, № 4, էջ 177, 193—194, 191—192։

ասածը ընձեռել է թագավորություն և դրա համաձայն նրանք գրավել են թագավորական դահը (բառացիորեն՝ «տեղը»)։ Այս բոլորից հետո սկսվում է ավյալ տարվա արշավանքների արաֆարեա վերնագրային տեքստը, ըստ որի թագավորները Խալդի ասածո անունից պատմում են իրենց այդ տարվա նվաճումների մասին։

Այսպիսով, ի մի բերելով վերոհիշյալ փաստերը, այսինքն՝ Խալդի ասածո պատվին արձանագրված քարակոթողներ բարձրացնելը, արքայական տիտղոսաշարը, անեծքի ֆորմուլան, արքայական դահի գրավումը գերագույն ասածո շնորհիվ և, վերջապես, արշավանքների վերնագրային տրաֆարետ տեքստի առկայությունը—կարծում ենք, թե այս բոլորի ամբողջությունը, որպիսին այլևս չունենք ուրարտական վիմագրության մեջ ընդհանրապես, կասկած չի թողնում, թե ավյալ դեպքում, ամենայն հավանականությամբ, մենք գործ ունենք Արգիշտի I-ի և Սարդուրի II-ի տարեգրությունների տեքստերի սկզբի մասերի հետ։ Այս բոլորից հետևում է, որ 128A3 արձանագրության 24—28 տողերը ակներևաբար հանդիսանում են Խորխորյան տարեգրության I տարվա իրադարձությունների սկիզբը՝ վերնագրային տրաֆարետ ֆորմուլայով (որտեղ թագավորը, սովորաբար Խալդի ասածո անունից, պատմում է իր ավյալ տարվա նվաճումների մասին ընդհանրապես)[1] և I արշավանքին նախորդող ֆորմուլայով (կամ նրա մի մասով)։ Դժբախտաբար վերնագրային տեքստում տուժած է ավյալ տարում նվաճված երկրի անունը, որը անդնահատելի փաստ կարող էր ծառայել այդ տեքստի և Խորխորյան տարեգրության 2-րդ սյունակի սկզբում արտահայտված իրադարձությունների առնչությունը պարզելու խնդրում։ Սակայն, մյուս կողմից, բարեբախտաբար, կան որոշ անժխտելի կռվաններ, որոնք կարող են հնարավորություններ ընձեռել այդ հարցում հանգելու կոնկրետ եզրակացությունների։ Բանն այն է, որ 128A3 արձանագրության վերնագրային դեկլարացիայի տեքստի տուժած տեղը ցույց է տալիս, որ ավյալ դեպքում, ամենայն հավանականությամբ, առկա է եղել ընդամենը մեկ երկրանուն։ Այդ մասին է ակնարկում նաև հիշյալ արձանագրության 25-րդ տողում առկա tequni («ծնկի բերեց-նրան») բայաձևի օբյեկտային, եզակի թվի ni ցուցիչը[2]։ Եվ եթե այդպես է, ապա հաշվի առնելով ուրարտական տարեգրությունների զանազան տարիների իրադարձությունների ուսումնասիրությունը, դալիս ենք այն համոզման, որ ավյալ տարում, ամենայն հավանականությամբ, ձեռնարկվել է ընդամենը մեկ արշավանք։

---

[1] Այդ մասին մանրամասն տե՛ս Н. В. Арутюнян, Заглавные декларации урартских надписей и их значение при изучении вопросов топонимики, Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1954, № 8, էջ 81—93։

[2] Վերնագրային տեքստում մեկից ավելի երկրանունների առկայության դեպքում, սովորաբար, յուրաքանչյուր երկրանվան հետ կրկնվում է նաև karuni («հպատակեցրեց-նրանց») բայաձևը, որն այստեղ արտահայտված է ընդամենը մեկ անգամ։ Մյուս կողմից մեկից ավելի երկրների առկայության դեպքում tequni բայաձևը հանդես է գալիս բացառիկ դեպքերում. ընդհակառակը, նման դեպքերում օրինաչափ է tequali («ծնկի բերեց-նրանց») բայական ձևի հանդես գալը։ Նույն ձևով էլ բացառիկ են այն դեպքերը, երբ վերնագրային տեքստում մեկ երկրանվան առկայության դեպքում, ավյալ տարվա ընթացքում ձեռնարկվում են մեկից ավելի արշավանքներ։ Ավելի օրինաչափ է հակառակ իրողությունը, երբ վերնագրային տեքստը ակնարկում է մեկից ավելի երկրների նվաճման մասին, սակայն ավյալ տարում ձեռնարկվել է ընդամենը մեկ արշավանք, որի ընթացքում էլ նվաճվել են այդ երկրները։

Մյուս կողմից, 128A₃ արձանագրության վերջին մասի և 1271 արձանագրության սկզբնական մասի միջև հնարավոր կապը պարզելու նպատակով անհրաժեշտ է անդրադառնալ վերջինիս մեկնաբանությանը։ Այս արձանագրության 1—5-րդ տողերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այստեղ, ամենայն հավանականությամբ, տոկա է տվյալ տարվա 2-րդ (?) (նվազ հավանական է 3-րդ?) արշավանքին նախորդող տրաֆարետ տեքստը (տողեր 1—4, որոնցում պատմվում է թագավորի աղերսանքը ուրարտական դերագույն աստվածների եռյակին՝ Խալդիին, Թեյշեբային ու Շիվինիին) և այդ արշավանքի սկիզբն արտահայտող տրաֆարետ ֆորմուլան (ikukani MU sisuḫani...)[1]։ Հետևաբար, 128A₃ արձանագրության վերջին և 1271 արձանագրության սկզբնական մասերի համեմատությունը ցույց է տալիս, որ այդ երկու դեպքում էլ, ըստ երևույթին, գործ ունենք Արգիշտի I-ի՝ տարբեր տարիների ռազմական իրադարձությունները նկարագրող տեքստերի հետ։ Բստ որում, այդ արձանագրությունների միջև հավանաբար եղել է շուրջ 15—20 տող լի պարունակությամբ տեքստ, որը չի հասել մեզ և որը պետք է արտահայտած լինի I տարվա արշավանքի իրադարձությունները, ինչպես նաև 2-րդ տարվա վերնագրային տրաֆարետ դեկլարացիան և նույն տարվա 1 (?) արշավանքի նկարագիրը[2]։ Այնպես որ 128 A₃ արձանագրության վերջին մասի և 127-րդ արձանագրության I սյունակի սկզբի մասի միջև, ինչպես տեսանք վերևում, ոչ մի օրգանական կապ գոյություն չունի, ուստի այլևս ոչ մի կասկած չի մնում այն մասին, որ եթե 128A₃ արձանագրության վերջին մասը հանդիսանում է Խորխորյան տարեգրության I տարվա արշավանքի (և ոչ արշավանքների) սկիզբը՝ իր այսպես կոչված վերնագրային դեկլարացիայով և արշավանքին նախորդող տրաֆարետ ֆորմուլայի սկզբնական մասով, ապա 127-րդ արձանագրության մեզ հասած I սյունակի սկիզբը իրենից ներկայացնում է 2-րդ տարվա 2-րդ (?) արշավանքին նախորդող տրաֆարետ ֆորմուլան և, այնուհետև, հենց նույն արշավանքի իրադարձությունների նկարագիրը։

Շարունակելով Խորխորյան տարեգրության տեքստի մեր մեկնաբանությունը մինչև նրա 2-րդ սյունակի 32—37 տողերը, ուր հիշատակվում է Erebuni — Երևան քաղաք-ամրոցի (տող 33) կառուցման և նրա հետ կապված այլ հանգամանքների մասին, այնուհետև գալիս ենք այն համոզմանը, որ եթե 128A₃ արձանագրության 24—28 տողերը հանդիսանում են Արգիշտի I-ի թագավորության I տարվա իրադարձությունների սկիզբը՝ վերնագրային տրաֆարետ դեկլարացիայով և արշավանքին (ընդամենը 1 արշավանք) նախորդող ֆորմուլայի սկզբնական մասով, ապա 127-րդ արձանագրության I սյունակի 1—16 տողերը՝ 2-րդ տարվա իրադարձություններն են՝ 2-րդ արշավանքին (այդ տարվա վերնագրային դեկլարացիան և I արշավանքի իրադարձու-

[1] Այլ դեպքերում տոկա են ikukani MU (sale) sistini, ikukani MU (sale) tarani կամ ուղղակի ikukani MU (sale) ֆորմուլաները։ Տե՛ս УКII, 127, VI, տող 1, 128A1, տող 14, 155A, տող 17, 22 և այլն.

[2] Գ. Ա. Մելիքիշվիլին 127 I, տող 2—16 (=128B1) մերթ համարում է Արգիշտի I-ի եթե ոչ առաջին տարվա, ապա, համենայն դեպս, 2-րդ, մերթ էլ՝ ուղղակի 2-րդ (?) տարվա իրադարձությունների նկարագիրը (ВДИ, 1953, № 3, էջ 231), չնայած նրան, որ ի վերջո, որոշ վերապահությամբ հակվում է վերը բերված երկրորդ տեսակետի կողմը (ВДИ, 1953, № 3, էջ 232 և այլուր), որի հետ և համընկնում է, փաստական նյութի հանդամանալի վերլուծության հիման վրա, մեր կողմից արտահայտվող վերոհիշյալ կարծիքը։

թյունները չեն հասել մեզ) նախորդող տրափարեա ֆորմուլայով ու տվյալ արշավանքով և տարվա եզրափակիչ ֆորմուլայով, նույն սյունակի 17-րդ տողից մինչև 2-րդ սյունակի 4-րդ տողը ներկայացնում են 3-րդ տարվա իրադարձությունները՝ վերնագրային դեկլարացիայով, 2 արշավանքներով և տարվա եզրափակիչ ֆորմուլայով, 2-րդ սյունակի 5—24 տողերը՝ 4-րդ տարվա իրադարձությունները՝ վերնագրային դեկլարացիայով, մեկ արշավանքով և տարվա եզրափակիչ ֆորմուլայով և, վերջապես, նույն 2-րդ սյունակի 25—50 տողերը[1] (ուր 33-րդ տողում հիշատակվում է մեզ հետաքրքրող քաղաք-ամրոց Erebuni-ն) տալիս են 5-րդ տարվա իրադարձությունները՝ վերնագրային դեկլարացիայով, երկու արշավանքներով և տարվա եզրափակիչ ֆորմուլայով։

Այսպիսով, վերը բերված փաստական նյութը, ինչպես տեսանք, ցույց է տալիս, որ ուրարտական Erebuni քաղաք-ամրոցը կառուցվել է Արգիշտի I-ի թագավորության 5-րդ տարում։ Բայց հարց է ծագում, թե երբվանի՞ց է սկսում նրա թագավորության ժամանակաշրջանը, քանի որ, կասկածից վեր է, առանց այս հարցի լուսաբանման անհնարին է պարզել նաև Erebuni-ի հիմնադրման ժամանակը։ Այդ հարցի համար, ինչպես նկատել են ուրարտագետ-հետազոտողները, բանալի կարող է ծառայել ասսուրական էպոնիմների ցուցակի (որով Ասսուրեստանում գրանցվել է ժամանակագրությունը՝ պատմական դեպքերի համառոտ նշումներով) համապատասխան տվյալների և Արգիշտի I-ի տարեգրության փաստական նյութի բազմակողմանի համադրությունը[2]։

Եվ այսպես, ասսուրական էպոնիմների ցուցակում հիշատակվում է, որ Ասսուրեստանը արշավանքներ է ձեռնարկել Ուրարտուի դեմ 781—778, 776 և 774 թթ. այսինքն՝ սկսած 781 թ. 4 տարի անընդհատ և, այնուհետև, 1-ական տարի ընդհատումներով՝ 776 և 774 թթ.։ Եթե մնում է Խորխորյան տարեգրությանը, ապա այստեղ Ասսուրեստանի հետ ունեցած ընդհարումների մասին հիշատակվում է Արգիշտի I-ի թագավորության 6-րդ, 7-րդ և 9-րդ տարիներին։ Սակայն, չնայած այս վերջին հանգամանքին, մեզ թվում է, որ Ուրարտուից պետի հարավ և հատկապես հարավ-արևելք ընկած մի շարք երկրների, առանձնապես Մանայի, Բուշտուի, Բարուատայի և Պարշուայի հետ ունեցած ընդհարումները ևս, որոնց մասին հաղորդում է Խորխորյան տարեգրությունը, հիմնականում պետք է դասել Ուրարտուի և Ասսուրեստանի միջև տեղի ունեցած ռազմական բախումների շարքը, քանի որ այդ երկրները, հատկապես Արգիշտի I-ի և Սարդուրի II-ի թագավորության օրոք, մշտական կռվախնձոր են եղել Հին Արևելքի այդ երկու հզոր ստրկատիրական պետությունների միջև։ Հարցի այդօրինակ մեկնաբանման դեպքում հստակ կերպով երևում է, որ Արգիշտի I-ի թագավորության ոչ միայն երեք (VI, VII և IX), այլև համենայն դեպս ութ տարիների (VI—XIII) պատմությունը պետք է դիտել որպես Ուրարտուի և Ասսուրեստանի հուժկու և անընդմեջ ընդհարումների մի ժամանակաշրջան, երբ

[1] 128A2 արձանագրությունը հանդիսանում է Խորխորյան տարեգրության տվյալ սյունակի 25—41 տողերի կրկնագիրը (դուբլիկատը)։

[2] Տե՛ս Б. Б. Пиотровский, История и культура Урарту, Երևան, 1944, էջ 34—35. Г. А. Меликишвили, УКН, ВДИ, 1954, № 1, էջ 227. И. М. Дьяконов, ВДИ, 1956, № 2, էջ 68—71։

[3] Տե՛ս И. М. Дьяконов, Ассиро-вавилонские источники по истории Урарту (այսուհետև՝ АВИИУ), § 39, ВДИ, 1951, № 2, էջ 306։

Ուրարտուն բոլոր ուժերով ջանում էր ապահովել իր առաջնությունը ամբողջ Հին Արևելքում[1]։

Վերը բերված փաստերի համադրության լույսի տակ մենք, ինչպես և պրոֆ. Գ. Ա. Մելիքիշվիլին, հակված ենք 781 թվականը մ.թ.ա. համարելու Արգիշտի 1-ի թագավորության 6-րդ տարին, որից սկսած և՛ ասսուրական, և՛ ուրարտական աղբյուրները երկուստեք հաղորդում են միմյանց հետ ունեցած հաջորդական ռազմական ընդհարումների մասին։ Հետևաբար, դրա համաձայն, Արգիշտի 1-ի թագավորության սկիզբը, բնականաբար, պետք է տանել 5 տարի առաջ, այսինքն՝ մինչև 786 թ. մ.թ.ա.[2]։

Ի հակադրություն Արգիշտի I-ի թագավորության 6—13-րդ տարիների, միանգամայն այլ պատկեր է ներկայացնում նրա թագավորության 1—5-րդ տարիների իրադարձությունների ուսումնասիրությունը, որը պարզ ու հստակ ցույց է տալիս, որ ուրարտական թագավորը սիստեմատիկաբար դրաղված է եղել հյուսիս-արևելյան, հյուսիս-արևմտյան, արևմտյան և հարավ-արևմտյան մի շարք այնպիսի երկրների և ցեղերի տերիտորիաների նվաճման հարցերով, ինչպիսիք են՝ Դիաուխին, Տարիունին, Էրիախին, Իգանին, Զարախան, Էտիունին, Ուդուրի-Էտիունին, Աբիլիանին, Կիեխունին, Կամանան[3], Ուրուրդան, Մելիտեան, Խատեն (=Խատինիլին), Ներիբայի-Հովիտը (Niribai-hubi), և այլն և այլն։ Ըստ որում այդ տարիներին նվաճված երկրների շարքում, ինչպես տեսնում ենք, ոչ միայն հիշատակություն չկա Ասսուրեստանի մասին մասնավորապես, այլև հարավային ու հարավ-արևելյան փոքրիշատե նշանավոր երկրների (Մանա, Բարուատա, Պարսուա, Բուշտու և այլն) մասին ընդհան-

---

[1] Փաստորեն այդ նույնն են հավաստում նաև ասսուրական էպոնիմների ցուցակները, որոնք, բացառությամբ 777 (Խորխորյան տարեգրության 10-րդ տարի) և 775 (Խորխորյան տարեգրության 12-րդ տարի) թվերի, անընդհատ արձանագրում են Ուրարտուի հետ Ասսուրեստանի ունեցած ռազմական բախումների մասին։ Տե՛ս АБИИУ, § 39 (ВДИ, 1951, № 2, էջ 306)։

[2] Այդ հարցում այլ կարծիքի է Ի. Մ. Դյակոնովը, ըստ որի ասսուրական էպոնիմների ցուցակի 774 թ., այսինքն՝ Նացիբինի փոխարքա Իշտարդուրիի էպոնիմատում «Ուրարտուի և Նամրուի դեմ» ձեռնարկված արշավանքը անհրաժեշտ է նույնացնել Խորխորյան տարեգրության 7-րդ տարվա՝ Ասսուրեստանի ունեցած ռազմական ընդհարման հետ։ Ասսուրական այդ արշավանքը, Ի. Մ. Դյակոնովի կարծիքով, պատասխան էր՝ նախորդ տարում (Խորխորյան տարեգրության 6-րդ տարում) ուրարտացիների կողմից ասսուրական տերիտորիան ներխուժելուն և նրանց խորանալուն Ասսուրեստանի թիկունք՝ Դիյալա գետի հովտում (ուրարտական տեքստի «Բարիլուշ»-ում)։ Հենց այստեղ էլ (դեպի Նամրու) ուղղված է եղել Շամշի-լուի հակահարվածը (կամ հակահարվածներից մեկը), մյուս հակահարվածի հետ միասին, դեպի Ուրարտուի սեփական տերիտորիան (АВИИУ, § 37)։ Այդ երկու հակահարվածներն էլ ետ են մղվել՝ մեկը Արգիշտիի, մյուսը նրա զորապետների (awerasili) կողմից։ Հետևաբար, ըստ Ի. Մ. Դյակոնովի, Խորխորյան տարեգրության 6-րդ տարին=775 թ., 7-րդ տարին=774 թ. և 9-րդ տարին=772 թ.։ Ինչ վերաբերում է ասսուրա-ուրարտական 781—778 թթ. ընդհարումներին, ապա նրանք չեն հիշատակվում Խորխորյան տարեգրության մեջ, քանի որ որևէ հաջողություն չեն բերել ուրարտացիներին, այն դեպքում, երբ ասսուրական 776 թ. արշավանքը, հավանաբար, տեղիք է տվել պատասխան ուրարտական արշավանքին 775 թ. (Խորխորյան տարեգրության 6-րդ տարում)։ Այդ բոլորի հիման վրա, Ի. Մ. Դյակոնովը հակում ունի Արգիշտի I-ի թագավորության սկիզբը համարելու մ. թ. ա. 780 թվականը։ Տե՛ս ВДИ, 1956, № 2, էջ 69—70։ Հմմտ. նույն հեղինակի «История Мидии», М.—Л., 1956, էջ 170, ծանոթ. 3։

[3] Տե՛ս Н. В. Арутюнян, Хорхорская летопись Аргишти I, «Этнографика Востока», VII, М.—Л., 1953, էջ 92—93 (II, 18) և ծանոթ. 8։

բապես[1]։ Հետևաբար, պարզորոշ երևում է, որ Արգիշտի I-ի թագավորության առաջին հինգ տարիներին Ուրարտուն զբաղված է եղել իր հզորության ամրապնդմամբ, հատկապես ի հաշիվ հյուսիս-արևելյան, հյուսիս-արևմտյան, արևմտյան և հարավ-արևմտյան երկրների, ցեղերի ու ցեղային միությունների։ Հենց այդ նվաճումներն են և հպատակեցված երկրներում հիմնադրված ռազմա-ստրատեգիական հուսալի քաղաք-ամրոցները, դրանց թվում և Էրեբունին, որ ռեալ հող են ստեղծել Ուրարտուի համար, հետագայում իր հզորությունը այն աստիճան ապահովված համարելու, որպեսզի սիստեմատիկ ռազմական էքսպանսիա ձեռնարկի դեպի հարավ և հարավ-արևելք ընկած տերիտորիաները և հատկապես Հին Արևելքի այն ժամանակվա անընկճելի ախոյան Ասսուրեստանի դեմ։ Կիևխունին (որի ճանապարհին և հիմնադրվեց Էրեբունին), Խատեն և Նիրիբայի-Հուվիտը Արգիշտի I-ի թագավորության առաջին շրջանի ռազմական էքսպանսիայի վերջին հուսալի հենակետերն էին, որոնց նվաճումը վերջնականապես ապահովեց Ուրարտուի թիկունքը հյուսիսից, արևմուտքից ու հարավ-արևմուտքից՝ նոր ավելի վճռական գոտեմարտերի բռնվելու հարավային և հարավ-արևելյան մարշրուտներում։ Այս ժամանակաշրջանում է, ահա, որ Ուրարտուի ռազմական քաղաքականության մեջ սկսվում է միանգամայն նոր փուլ՝ Ասսուրեստանի և նրան այն ժամանակ հյուսիսից և հյուսիս-արևելքից հարևան ու հպատակ մի շարք երկրների հետ ռազմական անընդմեջ բախումների փուլը։

Վերոհիշյալ փաստերի լույսի տակ, մեզ թվում է, հիմք չի մնում այլևս կարծելու, թե ասսուրա-ուրարտական ռազմական բախումները պետք է որ սկսված լինեին Արգիշտի I-ի թագավորության առաջին իսկ տարվանից, ըստ որում առաջին հինգ տարիների բախումները իրենց արտահայտությունը չեն գտել Խորխորյան տարեգրության մեջ իբր թե այն պատճառով, որ նրանք որևէ հաջողություն չեն բերել Ուրարտուին[2]։ Կասկածից վեր է, որ հազիվ թե Ուրարտուն այդ ժամանակ ոչ միայն ձեռնպահ մնար այդ հարցում, այլևս չդիմեր ռազմական էֆեկտիվ արշավանքների միանգամայն հակադարձ մարշրուտներով, այն դեպքում, երբ Ասսուրեստանը այդ նույն պահին ձեռնարկում էր անընդմեջ հուժկու հարձակումներ և այդպիսով մղում մահու և կենաց պայքար հենց նրա՝ Ուրարտուի դեմ։ Կասկածից վեր է նաև, որ հյուսիս-արևելյան, հյուսիս-արևմտյան, արևմտյան ու հարավ-արևմտյան բազմաթիվ երկրների նվաճումը և այդ երկրներում Էրեբունիի նման հուսալի ռազմա-ստրատեգիական հենակետերի հիմնադրումը անհրաժեշտ սարսափ էին տարածել ամբողջ Հին Արևելքում, այդ թվում նաև այն ժամանակվա հզորագույն պետություն Ասսուրեստանում։ Պատահական չէ, որ ասսուրական Շամշիիլու տուրտանի, այսինքն՝ զորքերի գերագույն հրամանատարի մի արձանագրության մեջ Արգիշտի ուրարտացու անունը համարվում է, օծանը հողմի նման սարսափելի»։

[1] Միակ բացառությունը, թերևս, Իրկիուենին է (3-րդ տարի), որը, ըստ երևույթին, հարևան էր Մանային։ Տե՛ս УКН, 127, IV, 35=128 B2, 7:

[2] Տե՛ս նախորդ ծանոթագրությունը։

[3] Մեր կարծիքով ասսուրական էպոնիմների ցուցակի 780 թ. տակ բերվող վկայությունը, ըստ որի Ասսուրեստանը Շամշիիլուի էպոնիմատում արշավանք է ձեռնարկում Ուրարտուի դեմ, համապատասխանում է Սալմանասար IV-ի նույն Շամշիիլու Տուրտանի մի արձանագրության մեջ (АВИИУ, §. 38) հիշատակված իրադարձություններին։ Այս արձանագրության մեջ է հենց, որ Արգիշտի ուրարտացու անունը համարվում է սարսափելի որպես ծանր հողմ և նրա ուժերը լայնատարած,

Այսպիսով, ի մի բերելով վերը շարադրվածը, գալիս ենք այն համոզման, որ Խորխորյան տարեգրության 6-րդ տարվան համապատասխանում է ասսուրական էպոնիմների ցուցակի 781 թիվը, հետևաբար Արգիշտի I-ի թագավորության սկիզբը, դրան համապատասխան, պետք է տանել հինգ տարով դեպի ետ, այսինքն՝ մինչև 786 թ. մ.թ.ա., ըստ որում մեզ հետաքրքրող Erebuni-Erevuni — Երևան քաղաքի հիմնադրումը, որը Խորխորյան տարեգրության տվյալների համաձայն տեղի է ունեցել Արգիշտի I-ի թագավորության 9-րդ տարում, այսինքն՝ ասսուրա-ուրարտական ռազմական առաջին ընդհարմանը (781) նախորդող տարում, պետք է վերագրել մ.թ.ա. 782 թվականին[1]։

Այժմ անդրադառնանք այն հարցին, թե ինչ նպատակ է հետապնդել Արգիշտի I-ը՝ հիմնադրելով Էրեբունին։ Այս կապակցությամբ նախ նշենք, որ Արգիշտի I-ը ուրարտական այն թագավորն էր, որ, ի տարբերություն իր նախորդների, հայացքը հառել էր դեպի Արարատյան դաշտավայրի լայնատարած ու արգավանդ հողերը, դեպի Սևանա լճի ավազանի լեռնային ճոխ արոտավայրերը։ Եվ եթե հաշվի առնենք, որ ուրարտական պետության տնտեսության առավել աչքի ընկնող ճյուղերից էին երկրագործությունը (այգեգործության ու խաղողագործության հետ միասին) և անասնապահությունը, ապա միանգամայն պարզ կդառնա, թե վերոհիշյալ տերիտորիաները ինչպիսի վճռական նշանակություն կարող էին ունենալ Ուրարտուի տնտեսության վերելքի համար։

մի թագավոր, որ ձեռք չի մեկնել նախկին թագավորներից և ոչ մեկին։ Եթե ընդունենք, ինչպես կարծում է Ի. Մ. Դյակոնովը, որ 780 թ. մ. թ. ա. հանդիսացել է Արգիշտի I-ի թագավորության առաջին տարին, ապա անհասկանալի է մնում նրա տարածած սարսափը Շամշիիլուի վրա՝ թագավորության հենց առաջին տարում։ Իսկ եթե ընդունենք, ինչպես մենք ենք կարծում, որ 780 թ. եղել է Արգիշտի I-ի թագավորության 7-րդ տարին և որ առաջին հինգ տարիներին նա մի ամբողջ շարք հաջող ու սրընթաց արշավանքների շնորհիվ կարողացել էր իր պետության սահմանները զգալի չափով ընդարձակել ի հաշիվ հյուսիս-արևելյան, հյուսիս-արևմտյան, արևմտյան և հարավ-արևմտյան երկրների նվաճումների և, այնուհետև, արդեն 2-րդ տարին էր (780), ինչ նա նույնպիսի հաջող ռազմական բախումներ էր ունենում Ասսուրեստանի հետ, ապա միանգամայն հասկանալի կդառնա, թե ինչու էր Շամշիիլուն Արգիշտի I-ի անունը համարում «ծանր հոգմի նման սարսափելի»։

Մյուս կողմից, ինչպես ցույց են տալիս հին-արևելյան սեպագիր հուշարձանների տվյալները, թագավորների անհաջողությունները այս կամ այն իրագործություններում ոչ թե չափվում են նրանց թողած գրավոր աղբյուրներում նմանօրինակ փաստերի բացթողումով կամ անտեսումով, ինչպես կարծում է Ի. Մ. Դյակոնովը Խորխորյան տարեգրության առաջին հինգ տարիների վերաբերյալ, այլ տարիներ շարունակ անընդմեջ ռազմական ընդհարումներով նույն երկրների հետ, ինչպես այդ ցույց է տալիս հենց ասսուրական էպոնիմների ցուցակի և Խորխորյան տարեգրության փաստերի երկուստեք համադրությունը։ Ի դեպ նշենք, որ էպոնիմների ցուցակը, որպես կանոն, հավաստում է ոչ թե Ասսուրեստանի՝ Ուրարտուի դեմ տարած հաղթանակների, այլ միայն նրա հետ ունեցած ռազմական ընդհարումների մասին։ Իսկ եթե նկատի ունենանք նաև այն, որ այդ նույն տարիների հաղթանակների մասին է հավաստում հենց ինքը Խորխորյան տարեգրությունը, ապա պետք է ենթադրել, որ այդ երկու հզոր ախոյանների ռազմական հաճախակի ընդհարումները երկար ժամանակ ընթացել են փոփոխակի հաջողություններով՝ լրիվ կամ մասնակի հաղթանակ բերելով մերթ մեկ և մերթ մյուս կողմին։

[1] Այդ նույն եզրահանգումների համաձայն Արգիշտիխինիլի—Արմավիրի, որը Խորխորյան տարեգրության տվյալների համաձայն կառուցվել է Արգիշտի I-ի թագավորության 11-րդ տարում (տե՛ս УК'I, 127, IV, տող 72), հիմնադրումը անհրաժեշտ է վերագրել 776 թ. մ. թ. ա., ուստի նա ունի 2733 տարվա հնություն, այսինքն հիմնադրվել է 6 տարի ավելի ուշ, քան սույն հետազոտության առարկա հանդիսացող Erebuni-Երևանը։

Այդ է ահա պատճառը, որ Արգիշտի I-ը Արաքսի աջ ափին, իր նախորդի՝ Մենուայի կողմից հիմնադրված վարչա-տնտեսական կենտրոնը՝ Մենուախինիլի-Դաշբուրունը անհրաժեշտ է գտնում փոխադրել դեպի հյուսիս-արևելք, այսինքն՝ Էրեբունի-Երևան[1]։ Ելնելով Արգիշտի I-ի Խորխորյան տարեգրության համապատասխան տեքստից և նույն թագավորի Erebuni—Արին-բերդում 1950 թ. հայտնաբերված արձանագրությունից, կարելի է եզրակացնել, որ այդ քաղաք-ամրոցը հիշյալ ժամանակաշրջանում եղել է ուրարտական պետության ստրատեգիական տեսակետից բավական հուսալի մի հենակետ՝ դեպի Սևանա լճի հյուսիս-արևմտյան, արևմտյան և հարավային ափերը նպատակասլաց ռազմական էքսպանսիա ձեռնարկելու համար։ Բավական է նշել, որ ինքը՝ ուրարտական թագավորը և՛ Խորխորյան տարեգրության և՛ Արին-բերդի վերոհիշյալ արձանագրության մեջ այդ քաղաք-ամրոցը համարում է «հոյակապ» (baduse), ըստ որում հզորության գրավական՝ Բիայնիլի (Ուրարտու) երկրի և, ընդհակառակը, սարսափ ներշնչող՝ թշնամի երկրներին։

Մյուս կողմից, Խորխորյան տարեգրության մեջ Էրեբունիի կառուցումը համընկնում է Արգիշտի I-ի թագավորության 5-րդ տարում դեպի Կի(ե)խունի քաղաքի երկիրը (Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափին, այժմյան Լճաշեն գյուղի շրջանում) ձեռնարկված արշավանքի (այդ տարվա I արշավանքը) ժամանակաշրջանին, հետևաբար միանգամայն պարզ է դառնում, որ այդ քաղաք-ամրոցի հիմնադրումը սկզբնապես կապված է եղել հենց տվյալ արշավանքի արդյունքները ամրապնդելու հետ։ Խորխորյան տարեգրության վերոհիշյալ տեքստը միաժամանակ հավաստում է, որ ուրարտական այդ թագավորը թվով 6600 զինվոր կամ ռազմագերի է բնակեցրել Էրեբունիում, որ նա բերել էր, ըստ երևույթին, նախորդ՝ 4-րդ տարվա արշավանքի ընթացքում Խատե (խեթերի) և Ծուփանի (պատմական Ծոփք) երկրներից[2]։ Եթե այս բոլորին ավելացնենք նաև Էրեբունիի հնագիտական պեղումների ընձեռած փաստական նյութը, ըստ որի մ.թ.ա. VIII դարի ուրարտական այդ քաղաք-ամրոցը գրավել է շուրջ 6 հեկտար տարածություն[3] և չնայած իր բավական անառիկ դիրքին, այնուամենայնիվ, ունեցել է մոտ 10 մետր բարձրությամբ պարիսպներ, ապա միանգամայն հասկանալի կդառնա, թե ինչպիսի կարևոր նշանակություն է տվել

---

[1] Ուրարտագետները սովորաբար այն կարծիքին են եղել, թե անցնելով Արաքս գետը, Արգիշտի I-ը իր նոր վարչա-տնտեսական կենտրոնը հիմնադրել է այդ գետի անմիջապես աջ ափին։ Այժմ պարզ է դառնում, որ Մենուախինիլիին, ժամանակագրական տեսանկյունից, փոխարինել է ոչ թե Արգիշտիխինիլի-Արմավիրը, այլ հենց Էրեբունի-Երևանը։ Արգիշտիխինիլին, Արգիշտի I-ի և նրա հաջորդների համար, ըստ երևույթին, հանդիսացել է ոչ այնքան ստրատեգիական հենակետ՝ դեպի հյուսիս և հյուսիս-արևելք արշավելու համար, որքան վարչա-տնտեսական կենարոն՝ Արարատյան դաշտավայրի այդ շրջանի էկոնոմիկան վարելու և զարգացնելու համար (այդ մասին տե՛ս նաև նախորդ ծանոթագրությունը)։

[2] Այդ տարում Արգիշտի I-ը գերի էր վերցրել ընդամենը 29284 տղամարդ կին և պատանի, որոնց ընդհանուր թվից կենդանի վիճակում գերեվարած տղամարդկանց թիվը կազմել է 8694։ Տե՛ս УКН, 127, II, տող 19—21։ Այստեղ, չգիտես ինչու, Ծուփանին չի հիշատակվում։

[3] Հմմտ. Թեյշեբաինիի (Կարմիր-բլուրի) միջնաբերդի տարածության հետ (4 հեկտար), որը, ինչպես տեսնում ենք, մեկ և կես անգամ փոքր է Էրեբունիից։

Արգիշտի I-ը նրան՝ Արարատյան դաշտավայրի նվաճված շրջանները իր ձեռքում ամուր պահելու և ռազմական էքսպանսիան դեպի հյուսիս անխափան շարունակելու համար։ Այդ է, ահա, պատճառը, որ Արգիշտի I-ը՝ Արարատյան դաշտավայրի և Երանից հյուսիս նվաճված տերիտորիաների անվտանգությունը ապահովելու համար էրեբունիում կենտրոնացնում է ոչ միայն ուրարտական մեծաքանակ զորքեր, այլև Խատե և Ծուփանի երկրներից վերաբնակեցված 6600 ռազմագերիներ։ Հետևաբար, իրավացի է Ի. Մ. Դյակոնովը, երբ կարծում է, թե հպատակեցված երկրներից Ուրարտուի վերցրած ռազմագերիների մի մասը, ակներևաբար, բնակեցվել է ուրարտական ամրոցներում և ներգրավվել բնդհանուր զորքի մեջ[1]։

Մյուս կողմից, կասկածից վեր է, որ էրեբունիի, ինչպես նաև ուրարտական ամեն մի այլ ամրոցի կայազորում հիմնական կորիզը կազմել է հենց ուրարտական զորքը։ Հազիվ թե Ուրարտուն իր ամրոցների պաշտպանությունը վստահեր բացառապես վերաբնակեցված ռազմագերիներին։ Ուստի միանգամայն հասկանալի է, որ ուրարտական զորքը էրեբունիում պետք է կազմած լինի շատ ավելի ստվար թիվ, քան Խատե և Ծուփանի երկրներից բերված 6600 ռազմագերիներն էին, ըստ որում այդ միջնաբերդը, իր վեց հեկտար տարածությամբ, դժվար թե կարողանար պատսպարել նույնիսկ վերոհիշյալ ռազմագերիներին։ Հետևաբար, հաշվի առնելով այդ հանգամանքը, ինչպես նաև ուրարտական մյուս քաղաք-ամրոցների կառուցվածքը, ինչպիսին, օրինակ, Թեյշեբաինին է, կարծում ենք, որ էրեբունին ևս, անկասկած, միջնաբերդի հետ միասին, պետք է ունեցած լինի նաև քաղաքային մաս, որտեղ և, հավանաբար, տեղավորվել է էրեբունիի կայազորի մի ստվար մասը։ Այդ քաղաքամասը, բնականաբար, պետք է փռված լիներ ամրոցից ոչ հեռու՝ հենց Արին-բերդի ստորոտում։ Եվ իսկապես, այդ մասին է, ըստ երևույթին, ակնարկում էրեբունիի շրջակայքում՝ Նոր-Արեշ ավանում («Լենուղի» կոլտնտեսության ֆերմաների և այժմյան դերեզմանատան միջև) 1957 թ. հուլիսի սկզբին հայտնաբերված ուրարտական դամբարանադաշտը (կոլումբարին)։ Այդ բոլորը ցույց են տալիս, որ էրեբունի քաղաք-ամրոցը եղել է ուրարտական պետության այն ժամանակվա բավական հուսալի ռազմա-ստրատեգիական հենարանը Արարատյան դաշտավայրում[4]։

---

[1] Տե՛ս И. М. Дьяконов. К вопросу о судьбе пленных в Ассирии и Урарту. ВДИ, 1952, № 1, էջ 100։ Այդ տեսակետը, ի տարբերություն իր նախկին կարծիքի (ВДИ, 1953, № 1, էջ 26 և հտ., Наири-Урарту, էջ 347 և ծանոթ. 1) այժմ ընդունելի է համարում նաև Գ. Ա. Մելիքիշվիլին, տե՛ս Г. А. Меликишвили. К вопросу о хеттоцупаннийских переселенцах в Урарту, ВДИ, 1958, № 2, էջ 46։

[2] Արին-բերդում 1956 թ. հայտնաբերված Արգիշտի I-ի արձանագրության մեջ հիշատակված Iuarša (Iwarsa) աստվածը, որին նվիրվել է կառուցված susi-ն, Գ. Ա. Մելիքիշվիլին հակում ունի նույնացնելու լուվիական Im(m)arša (Imrassa)-ին, ուստի նա հանգում է այն մտքին, թե այդ աստծո պաշտամունքը էրեբունիում հավանաբար կապված է եղել ուրարտական այդ թագավորի իշխանության չորրորդ տարում (783 թ. մ. թ. ա.) դեպի Խատե և Ծուփանի երկրները ձեռնարկած արշավանքի և այնտեղից վերաբնակեցված վերոհիշյալ ռազմագերիների հետ։ Մյուս կողմից, նրա կարծիքով, ի դեմս Իուարշայի (Իվարշայի) ուրարտացիները, ըստ երևույթին, նկատի են ունեցել հենց իրենց Խալդիին։ Տե՛ս ВДИ, 1958, № 2, էջ 42—47։

[3] Տե՛ս Հ. Մարտիրոսյան, Հ. Մ. Նազարյան, Նոր-Արեշի ուրարտական կոլումբարին, Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1958, № 10, էջ 63—84։

[4] Էրեբունին, ինչպես հետագայում և Թեյշեբաինին, ըստ երևույթին մտել է ուրարտական Կուարլինի կամ Կուրլինի մարզի վարչա-տերիտորիալ կազմը։

Հասկանալի է, որ Ուրարտուի իշխանությունը պետք է արտակարգ հոգատարություն ցուցաբերեր Արարատյան այդ բերրի դաշտավայրի նկատմամբ, որպեսզի անհրաժեշտ նախադրյալներ ստեղծեր ոչ միայն պետության տնտեսական կարիքները ապահովելու համար ընդհանրապես, այլև Էրեբունիի հսկայական կայազորի տնտեսական պահանջմունքները բավարարելու համար մասնավորապես։ Եվ իսկապես, ուրարտական երկու սեպագիր արձանագրությունների վկայությամբ, Էրեբունիի հիմնադրող Արգիշտի I-ը և նրա հաջորդ Սարդուրի II-ը այդ քաղաք-ամրոցում կառուցում են հացահատիկի երկու խոշոր պահեստներ (Carı)—15200 «կապի» ընդհանուր տարողությամբ[1]։ Հատկանշական է, որ ուրարտական այդ արձանագրությունների մատուցած տվյալները հաստատվում են հենց Էրեբունիի հնագիտական նյութերով։ Այսպես, օրինակ, ամրոցի հյուսիս-արևելյան մասում պեղված սենյակներից մեկը, պրոֆ. Բ. Բ. Պիոտրովսկու կարծիքով, հավանաբար ծառայել է որպես հացահատիկի պահեստ։ Այդ մասին է ակնարկում սենյակի հատակի յուրօրինակ կառուցվածքը՝ հացահատիկը խոնավությունից պահպանելու համար։ Մյուս կողմից, պեղումների ժամանակ մի մեծ սենյակում, որն ընկած է սյունազարդ դահլիճի և այսպես կոչված susi տաճարի միջև, հայտնաբերվել են կորեկի մնացորդներ[2]։ Թե որքան մեծ նշանակություն է ավել Արգիշտի I-ը Էրեբունիի ու նրան շրջակա տերիտորիայի կամ Կուարլինի-Կուրլինի[3] մարզի էկոնոմիկայի զարգացմանը, այդ երևում է թերևս այն ակնառու փաստից, որ Էրեբունիում նրա կառուցած հացահատիկի պահեստը՝ 10100 «կապի» տարողությամբ[4], ոչ միայն չի գիջել Ուրարտուի կենտրոնական մասում (Վանում) նույն թագավորի կառուցած հացահատիկի պահեստին՝ 10 հազար «կապի» տարողությամբ, այլև, ինչպես տեսնում ենք, նույնիսկ որոշ չափով գերազանցել է նրան։ Այս բոլորը ցույց են տալիս, որ Արգիշտի I-ը հսկայական ջանքեր է նվիրել ոչ միայն Էրեբունիի ռազմական հզորությանը, այլև նրան շրջակա տերիտորիաների տնտեսական զարգացմանը։

Վերոհիշյալ փաստերը գալիս են միաբերան հավաստելու, որ Արգիշտի I-ի թագավորության օրոք Էրեբունին եղել է Ուրարտուի առավել հզոր ու տնտեսապես զարգացած ռազմա-ստրատեգիական կենտրոններից մեկը ոչ միայն Արարատյան դաշտավայրում, այլև հին-արևելյան այդ լայնատարած պետության

---

[1] Տե՛ս УКН, 139, 164։

[2] К. Л. Оганесян, Арин-берд (Архитектура Эребуни), Երևան, 1957 (ձեռագիր), էջ 12, 50, 68։

[3] Մեզ թվում է, թե առաջնությունը պետք է տալ այս տեղանվան Կուարլինի բնթերցմանը, ըստ որում «-լինի» վերջավորության «-լի» մասնիկը անհրաժեշտ է դիտել որպես ուրարտերենի հոդնակիի նշան, իսկ «-նի»-ն՝ տոպոնիմիկ վերջածանց։ Ի դեպ, սույն KUPQuarlini-ն (УКН, 281, տող 6), ինչպես նաև IQuarzani-ն (УКН, 127, I տող 18), DQuerainili-ի (УКН, 58, տող 23) և DQuerai-tase-ի (УКН, 158, տող 31) հետ միասին, մեր կարծիքով, հավանաբար, վերջին հաշվով սերում են ուրարտական Quera աստծո (УКН, 11А, տող 4. 27, տող 8, 42.106, տող 2, 3) անունից։ Նույնպիսի բախտ է վիճակվել հետագայում, ըստ երևույթին, միջնադարյան հայկական «Կուառ աւան (գիւղ, դաստակերտ)» տեղանվանը և «Կուառայ տուն» նախարարական տոհմանվանը (տե՛ս Հովհան Մամիկոնյան, Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1941, էջ 80, 82, 105, 111, 125 և այլն)։ Տե՛ս նաև Н. В. Арутюнян, Даинала-тини (из истории ирригации в Урарту), Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), Երևան, 1957, № 4, էջ 101—102։

[4] Տե՛ս УКН, 139.

մեջ ընդհանրապես[1]։ Նրա հզորությունը, ակներևաբար, շարունակվել է նաև Արգիշտի I-ի հաջորդների, համենայն դեպս Սարդուրի II-ի և Ռուսա I-ի թագավորության ժամանակաշրջանում։ Էրեբունիի ճակատագիրը, հավանաբար, եղել է առանձնահատուկ ուշադրության առարկա նաև Արգիշտիի որդու՝ Սարդուրի II թագավորի համար, քանի որ վերջինս ոչ միայն շարունակում է նպատակասլաց ռազմական արշավանքներ ձեռնարկել դեպի Սևանա լճի ավազանում ընկած երկրները[2], հենակետ ունենալով, իհարկե, դարձյալ նույն Էրեբունի ռազմա-ստրատեգիական բազաք-ամրոցը, այլև իր նախորդի նման կառուցում է այստեղ 5100 «կապի» ընդհանուր տարողությամբ հացահատիկի պահեստ[3]։ Այդ նույնը, ըստ երևույթին, կարելի է ասել նույնպես Սարդուրի II-ի հաջորդի՝ Ռուսա I-ի մասին, որը ապահովված համարելով իր ռազմա-ստրատեգիական հզորությունը Արարատյան դաշտավայրում, մեծ հաջողությամբ արշավանքներ է ձեռնարկում դեպի Սևանա լճի ավազանում այն ժամանակ բնակություն հաստատած ցեղերի ու ցեղային միությունների երկրները[4]։

Էրեբունիի հզորության և նրա ռազմա-ստրատեգիական նշանակության մասին նույնը չի կարելի ասել Ռուսա II-ի (VII դար մ.թ.ա.) թագավորության ժամանակաշրջանի վերաբերյալ։ Կարմիր-բլուրի պեղումներում հայտնաբերված բազմաթիվ հնագիտական նյութեր հավաստում են, որ Ուրարտուի տիրապետության այդ ժամանակաշրջանում Էրեբունին կորցնում է իր երբեմնի հզորությունն ու առաջնությունը Արարատյան դաշտավայրում և զիջում իր տեղը նորակառույց Թեյշեբաինիին[5]։ Այդ մասին է ակնարկում ուրարտական VIII դարի թագավորների կողմից Էրեբունիին նվիրված մի ամբողջ շարք հնագիտական առարկաների (բրոնզե վահաններ, սաղավարտներ և այլն) առկայությունը Թեյշեբաինիում։ Սակայն Էրեբունի ռազմա-ստրատեգիական կենտրոնի առաջնության անկումը մ.թ.ա. VII դարում՝ Ռուսա II-ի թագավորության ժամանակաշրջանում, ընդամենը չի նշանակում, թե նրա գոյությունը դադարում է ընդհանրապես։ Կյանքը Էրեբունիում անկասկած շարունակվում է և հետագայում, բայց նրան, իհարկե, այլևս չի վերադառնում Արարատյան դաշտավայրի ռազմա-ստրատեգիական հզոր կենտրոնի երբեմնի փառքը։ Նա դառնում է շարքային բնակատեղի՝ Կուարլինի ուրարտական մարզի կամ երկրի տերիտորիալ կազմում[6]։ Դրա լավագույն ապացույցն է կուլտուրա-

[1] Մեր կարծիքով, Էրեբունին, իր գոյության առաջին հինգ տարում, այսինքն՝ մինչև Արգիշտիխինիլի հիմնադրումը, իր հիմնական՝ ռազմա-ստրատեգիական ֆունկցիաների կողքին միաժամանակ կատարել է նաև Արարատյան դաշտավայրի էկոնոմիկան վարելու վարչա-տնտեսական ֆունկցիաները։ Մեր դատողությունները այդ մասին տե՛ս ներքևում։

[2] Տե՛ս Նրա Ագիամանի (Սևանա լճի հարավ-արևմտյան ափին, УКН, 160, տող 1—7) և Զագալուի (Սևանա լճի հարավային ափին, УКН, 161, տող 1—5) արձանագրությունները։

[3] Տե՛ս УКН, 164, տող 1—5։

[4] Տե՛ս Նրա Նոր-Բայազետի (Սևանա լճից դեպի արևմուտք, УКН, 265, տող 1—6) և Ծովինարի (Սևանա լճի հարավ-արևմտյան ափին, УКН, 266, տող 1—18) արձանագրությունները։

[5] Էրեբունիին զուգընթաց վարչա-տնտեսական կենտրոնի իր երբեմնի առաջնությունը կորցնում է նաև Արգիշտիխինիլին և զիջում այն դարձյալ Թեյշեբաինիին։

[6] Այդ նույնը կարելի է ասել նաև Արգիշտիխինիլի մասին, որն իր դերը զիջում է դարձյալ Թեյշեբաինիին։ Մեր կարծիքով Արգիշտիխինիլին, ի տարբերություն Էրե-

կան նոր շերտի առկայությունը Էրեբունիում, որը հավաստվում է VI—V դարերին վերաբերող սկյութական տիպի նետասլաքների, իրանական տիպի ձիու սանձի, միլեթյան տիպի արծաթե դրամների, ինչպես նաև ուլունքների և այլ առարկաների հայտնաբերմամբ[1]։ Հնագիտական այդ նյութերը ակնառու կերպով վկայում են, որ այդ քաղաք-ամրոցը իր գոյությունը շարունակել է նաև ուրարտական ժամանակաշրջանում։

Էրեբունիի մասին, այնուհետև, շուրջ տասը երկար ու ձիգ դարեր պատմություն համառությամբ լռում է։ Ըստ երևույթին, ուրարտական ժամանակաշրջանի առաջնության անկումից հետո նա այնպես էլ շատ երկար ժամանակ չի կարողանում փոքրիշատե ուշքի գալ և շարունակում է մնալ նույն աննշան բնակատեղիներից ու ավաններից մեկը՝ ընդհուպ մինչև մեր թվականության VII դարի սկիզբը, երբ արդեն հայ մատենագրության մեջ անուղղակի ձևով, այս անգամ Էրեբունի—Էրեվունիից ոչ հեռու ժամանակակից «Երևան» հորջորջմամբ, հիշատակվում է Աբրահամ կաթողիկոսի գումարած եկեղեցական ժողովին վերաբերող փաստաթղթում։ Այդ ժողովին, ինչպես հավաստում է

---

[1] Տե՛ս Ի. Մ. Լոսևա, Новые археологические исследования отряда ГМИИ им. А. С. Пушкина на холме Арин-берд, „Советская археология", 1958, № 2, էջ 181, 186 (նկ. 9), 191. Մ. Իսրայելյան, Արին-բերդի susi տաճարը և նրա արձանագրությունները, Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1957, № 9, էջ 91, նույն հեղինակի, Արծաթե երկու դրամ Արին-բերդից, «Սովետական Հայաստան» ամսագիր, Երևան, 1957, № 9, էջ 16։ Ի դեպ նշենք, որ հայտնաբերված նյութը, գժբախտաբար, գեռևս, ինչպես հարկն է մշակված չէ։ Հուսով ենք, որ նրա մեջ պետք է լինեն նաև ավելի ուշ շրջանին վերաբերող իրեր։

բունիի, նույնիսկ իր վերելքի շրջանում ոչ այնքան եղել է ռազմա-ստրատեգիական, որքան վարչա-տնտեսական կենտրոն։ Բավական մոտ լինելով կենտրոնական Ուրարտուի հյուսիսային սահմաններին և գտնվելով Արարատյան դաշտավայրի գրեթե կենտրոնական մասում, նա, ըստ երևույթին, ավելի շատ վարել է այդ լայնատարած ու բերրի դաշտավայրի չափազանց հարուստ էկոնոմիկան և, այդպիսով, ոչ միայն ապահովել Կուարլինի ու Ագանի տեղական մարդերի և ամենից առաջ նրանցում հիմնադրված Էրեբունի ռազմա-ստրատեգիական ու Արգիշտիխինիլի վարչա-տնտեսական կենտրոնների տնտեսական կարիքները, այլև երկրագործական, խաղողագործական ու այգեգործական մթերքների հարուստ պաշարներ մատակարարել Ուրարտուի կենտրոնական իշխանություններ։ Արգիշտիխինիլին իր ստրատեգիական դիրքով, անկասկած, շատ տեսակետներից դիջել է Էրեբունիին։ Այդ մասին է հենց ակնարկում պատմահայր Մ. Խորենացին, երբ Հայաստանի մայրաքաղաքը Երվանդունիների վերջին թագավոր Երվանդի օրոք (III դարի վերջին կամ II դարի սկզբին մ. թ. ա., տե՛ս Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. 1, Երևան, 1944, էջ 127—128. «Հայ ժողովրդի պատմություն», 1-ին մաս, Երևան, 1958, էջ 13) Արմավիրից Երվանդաշատ փոխադրելու հիմնական պատճառներից մեկն էլ համարում է արքունիքի համար «մանավանդ մի ավելի ամուր տեղ փնտրելու» («...նա և ամրագունի ևս տեղւոյ եկեալ ի խնդիր...») անհրաժեշտությունը։ Տե՛ս Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 165 (գլ. ԼԹ)։

Արգիշտիխինիլին հետագայում, մ. թ. ա. VII—VI դարերում, ըստ երևույթին կատարել է կրոնա-պաշտամունքային կենտրոնի դեր Արարատյան դաշտավայրում։ Այդ մասին է կարծես թե ակնարկում Թեյշեբաինիում հայտնաբերված մի սեպագիր ազյուսակ, ըստ որի Թեյշեբաինին 'Ագա(նի) երկրում գտնվող 'Ա աստծո (նույնն է, ինչ Մհերկապուսիի արձանագրության Ա-ն, հմմտ. D'Arub.i(i)ni և DUarubani—Գ. Խ. Սարգսյան) քաղաքին նվիրում է ստրուկներ (?) և արհեստագործական ու անասնապահական մթերքներ։ Տե՛ս Н. В. Арутюнян, Новонайденная клинописная таблетка из раскопок Кармир-блура, ВДИ, 1957, № 3, էջ 111—119։

«Գիրք թղթոց»-ը, Հայաստանի մյուս նշանավոր վաներեցների հետ միասին, մասնակցել են նաև «Դաւիթ Երևանայ» և «Ջոջիկ Երևանից» երեցները[1]։

Երևանը, այնուհետև, հիշատակվում է նույն VII դարի պատմիչ Սեբեոսի «Պատմության» մեջ, ըստ որի, այդ հնագույն քաղաքը արաբական արշավանքների սկզբին եղել է մի նշանավոր ավան՝ իր անառիկ բերդով հանդերձ։ Ահա թե ինչ է գրում Սեբեոսը այդ մասին.

«Եւ եղև ի գալ միւսում ամի[2] եկն զաւրն Իսմայելի յԱրրպատական, և բաժանեցան յերիս։ Առաջ մի յԱյրարատ, և առաջ մի ի Սեպհական գնդին կողմանսն, և առաջ մի յԱղուանս։ Արդ՝ որք ի կողմանս Սեպհական գնդին՝ արշաւեալ սփռեցան և հարեալ զամենայն կողմանսն զայնոսիկ սրով սուսերի, առին զաւար և զգերութիւն։ Եւ եկին ժողովեցան ի յԵրևան, և մարտեան ընդ բերդին, և ոչ կարացին առնուլ»[3]։

Երևանի մասին, այդ նույն ժամանակի դեպքերի առիթով, ըստ երևույթին մատնացույց անելով Սեբեոսի «Պատմության» տվյալները, հետագայում ակնարկում է նաև X դարի պատմիչ Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցին, որի մոտ կարդում ենք.

«Յայնմ ժամանակի ասեն լինել զկռիւն, որ ի քաղաքագիւղն Երևանի, զոր և բաւական բեզ ուսուցանեն զայնր պատերազմի զհանգամանս որ նախքան զմեզ զնա պատմագրեցին»։

Հետագայում Երևանը սկսում է ավելի ու ավելի հաճախ հիշատակվել մեր միջնադարյան մատենագրության մեջ, ըստ որում աստիճանաբար աճում է նրա թե՛ տնտեսական և թե՛ մանավանդ քաղաքական կշիռը։

Ի դեպ նշենք, որ մ.թ.ա. VIII դարի ուրարտական քաղաք-ամրոց Էրեբունիի պեղումները նոր են միայն ստանում ավելի ծավալուն բնույթ։ Հուսով ենք, որ այդ պեղումները դեռևս պետք է տան բազմաթիվ նոր նյութեր, որոնք մի շարք այլ կնճռոտ հարցերի հետ միասին, կարող են լույս սփռել ուրարտական Էրեբունիի և հետագա շրջանի Երևանի միջև արդեն գոյություն ունեցող կապը ավելի ամրապնդելու և նրա պատմության մ.թ.ա. V և մ.թ. VII դարերի միջև դեռևս առկա խոշոր բացը աստիճանաբար լրացնելու և միջանկյալ հենակետեր ստեղծելու համար[5]։

[1] Տե՛ս «Գիրք թղթոց (մատենագրութիւն նախնեաց)», Թիֆլիս, 1901, էջ 131։

[2] Այսինքն՝ 612—613 թթ.։ Սեբեոսի այս տվյալները Երևանի մասին վերաբերում են արաբների դեպի Հայաստան ձեռնարկած 2-րդ արշավանքին։ Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», I մաս, Երևան, 1958, էջ 161։

[3] Սեբեոսի եպիսկոպոսի Պատմութիւն (խմբագրությամբ՝ Ստ. Մալխասյանցի), Երևան, 1939, էջ 118 (գլ. ԽԲ)։

[4] Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 92։

[5] Այս կապակցությամբ, ինչպես հաճույքով մեզ հայտնեց պրոֆ. Ռ. Ն. Առաբելյանը, արժանի է ուշադրության այն փաստը, որ Երևան քաղաքի տերիտորիայում (Կալինինի փողոցի վրա, Մուխաննաթ-թափայում՝ երկաթուղային կայարանի մոտ, Օպերայի և բալետի տների հիմքերում), շինարարական աշխատանքների ժամանակ, հայտնաբերվել են մի շարք հնագիտական նյութեր (կարասային թաղումներ, ապակե սրվակներ, խեցեղեն, փորը չափի կարաս), որոնք վերաբերում են մ. թ. ա. վերջին և մ. թ. առաջին դարերին, ուստի հավաստում են, որ նախ՝ կյանքը Էրեբունի—Երևանում շարունակվել է, ըստ երևույթին, նաև Հայաստանի պատմության անտիկ ժամանակաշրջանում և ապա՝ այդ քաղաքը, արդեն հիշյալ ժամանակաշրջանում, գուցե նրանից էլ շատ ավելի վաղ, սկսած է եղել իր տարածման պրոցեսը ուրարտական Էրեբունիից՝ Երևանի հարավ-արևելյան ծայրամասից դեպի վերջինիս կենտրոնական տերիտորիան։

Այսպիսով, ի մի բերելով վերը շարադրված ամբողջ նյութը, գալիս ենք այն եզրակացության, որ մեր այժմյան Երևանի՝ Լենինի շքանշանակիր Սովետական Հայաստանի բազմակողմանի զարգացած ու հրաշագեղ մայրաքաղաքի անունը ամենայն հավանականությամբ սերում է ուրարտական մ.թ.ա. VIII դարի քաղաք-ամրոց Էրեբունիից, որը հիմնադրվել է մ.թ.ա. 782 թ., ուստի ունի 2741 տարվա պատմական անցյալ։ Հետևաբար, ուրարտական Էրեբունին, որն այժմ մտնում է Երևանի վարչա-տերիտորիալ կազմի մեջ և բնված է նրա հարավ-արևելյան ծայրամասում, հանդիսանում է ժամանակակից Երևանի բազմադարյան պատմական անցյալի հավերժ մնայուն վկան։

К ДАТИРОВКЕ ОСНОВАНИЯ ГОРОДА ЕРЕВАНА

Н. В. АРУТЮНЯН

(Резюме)

Вопрос о возникновении названия и времени основания города Еревана стал предметом изучения армянской исторической науки начиная еще с 30-х годов прошлого столетия. Однако отсутствие достоверного фактического материала долгое время не позволяло прийти к сколько-нибудь удовлетворительным выводам в этой области.

Изучение упомянутого вопроса вошло в подлинно научный обиход лишь с 1950 года, когда на развалинах урартской крепости на холме Арин-берд (VIII в. до н. э.), расположенной на юго-восточной окраине Еревана, была обнаружена клинообразная надпись царя Аргишти I, повествующая о сооружении им этой «великолепной» (baduse) крепости под названием Эрбуни. При этом урарто-армянские звуковые соответствия В-վ v (ср. урартск. ebani «страна» и арм. ավան avan «населенный пункт, посёлок», урартск. ḫubi и арм. հովիտ hovit «долина» и т. д.) позволили в названии Эрбуни-Эрвуни видеть древнейшее название современного Еревана. Это мнение еще больше подтвердилось, когда на двух из многочисленных бронзовых щитов, обнаруженных при раскопках урартской крепости VII века до н. э. Тейшебаини и посвященных урартскими царями Аргишти I и Сардури II вышеупомянутому городу-крепости Эрбуни, это название выступило в форме Эребуни-Эревуни (Еревуни), что по своему написанию еще более приближалось к названию Еревана.

Следует обратить внимание на тот факт, что название Эребуни-Эревуни было известно в урартоведении гораздо раньше, согласно одной надписи того же Аргишти I, происходящей из столицы урартского государства Тушпа (совр. Ван — восточное побережье озера Ван) и опубликованной Леманном-Гауптом еще в конце прошлого столетия, а затем в знаменитом корпусе урартских надписей, но тогда вплоть до обнаружения вышеупомянутой Арин-бердской надписи еще не было известно местонахождение этого урартского города-крепости. С другой стороны, впо-

следствии выяснилось, что надпись, происходящая из Вана, является дубликатом летописи Аргишти I, на основании чего и было установлено, что Эребуни-Эревуни-Ереван был основан в 5-ом году правления этого урартского царя.

Однако, разумеется, что для выяснения времени основания Эребуни-Еревана, следует прежде всего выяснить время правления Аргишти I вообще, чтобы определить какой именно год соответствует 5-му году правления этого царя, т. е. году основания интересующего нас Эребуни-Еревана. Для разрешения этого вопроса представляют неоценимый интерес сведения из списка эпонимов (по которым в Ассирии велась датировка, с краткими историческими записями) и летописи урартского царя Аргишти I. Итак, всестороннее сопоставление данных упомянутых исторических письменных источников позволяет установить, что 781 год до нашей эры соответствует 6-му году правления Аргишти I, притом, имея в виду, что Эребуни-Ереван был основан годом раньше, т. е. в 5-ом году правления этого царя, становится вполне ясным, что время основания этого города падает на 782 год до нашей эры.

Впоследствии, т. е. в VII веке до нашей эры, в связи с основанием нового города-крепости Тейшебаини, военно-стратегический опорный пункт урартских правителей на Араратской равнине Эребуни (равно, как и административно-хозяйственный центр Аргиштихинили-Армавир) теряет свое первенствующее значение. Однако археологический материал, происходивший из раскопок Эребуни-Еревана, с достаточной достоверностью показывает, что этот город продолжал свое существование не только в последний период урартского владычества (VII — начало V веков до нашей эры), но и после него, т. е. в VI—V вв. до нашей эры.

О дальнейшей судьбе Еревана, вплоть до начала VII века нашей эры, история, к сожалению, умалчивает. После потери своего первенствующего значения еще в эпоху Урарту, он, по всей вероятности, свыше десяти веков продолжал оставаться одним из многочисленных рядовых поселков («аван»-ов) исторической Армении. С начала же VII века нашей эры Ереван снова начинает приобретать удельный вес и фигурирует сперва в «Книге посланий», а затем — в «Истории» Себеоса.

В дальнейшем название Еревана все чаще и чаще упоминается в средневековых армянских источниках, при этом постепенно растет как экономический, так и, особенно, политический вес этого города.

Раскопки в Эребуни лишь в последнее время начали приобретать более значительный объем. Мы надеемся, что они дадут новые материалы, позволяющие, наряду с другими вопросами, пролить свет также на затронутый нами вопрос и создать необходимые предпосылки для сокращения прорыва, существующего между V веком до нашей эры и VII веком нашей эры. При этом следует отметить, что некоторые археологические материалы (карасные погребания, стеклянные флаконы, керамика и т. д.), обнаруженные при строительных работах на территории Еревана и относящиеся к последним векам до н. э. и первым векам н. э., по-видимому, до некоторой степени восполняют упомянутый

выше пробел и указывают на то, что жизнь в Эребуни-Ереване продолжалась также в эллинистический период истории Армении.

Однако материал, которым мы располагаем, дает нам возможность и на сегодняшний день утверждать, что Ереван, основанный еще в 782 году до нашей эры, имеет давность в 2741 год и Эребуни, расположенный на его юго-восточной окраине, является живым свидетелем многовековой истории столицы ордена Ленина Советской Армении.